ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 5—6 (10—11), Երևան, 1941 թ.

Ա. Ս. Աբրահամյան

ՌՈՒՔՆ-ԷԴ-ԴԻՆԻ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ[1]

Անդրկովկասի ժողովուրդները դարեր շարունակ մի ընտանիքի զավակների նման ապրել են կողք կողքի, ստեղծագործել են կուլտուրական ակտիվ փոխհարաբերության պայմաններում, ձեռք ձեռքի տված պայքարել են բազմաթիվ ագրեսորների դեմ՝ բաժանելով իրար հետ կյանքի և՛ դառնությունը, և՛ ուրախությունը։

Անդրկովկասի բազմադարյան պատմության ընթացքում եղել են դեպքեր, երբ թշնամին, Անդրկովկասի ժողովուրդների դիմադրական ուժը թուլացնելու նպատակով, աշխատել է խախտել նրանց միասնությունը, փորձել է հակադրել այդ ժողովուրդներին իրար և անդամահատել նրանց քաղաքականապես, սակայն այդ ժողովուրդներն այնքան սերտ ու անխզելի բարեկամական կապերով են կապված եղել իրար հետ, որ այդ բոլոր փորձերը միշտ անհաջողության են մատնվել։

Անդրկովկասը կրել է Արևելքում գլուխ բարձրացրած ու նրան տիրապետելու ձգտող բազմաթիվ աշխարհակալների հարվածները։ Սակայն այդ աշխարհակալներից ոչ մեկին չի հաջողվել մազաչափ անգամ թուլացնել կովկասյան ժողովուրդների դիմադրական ուժը և ազատատենչ բարձր ոգին։

Անդրկովկասի ժողովուրդների պայքարն ագրեսորների դեմ հաջողությամբ է պսակվել հատկապես այն դեպքում, երբ հայ, վրաց և ադվան ժողովուրդները կովկասյան մյուս ժողովուրդների հետ միասնական ուժով են հանդես եկել օտարերկրյա ագրեսիայի դեմ։ Հայ, վրաց և կովկասյան հարևան ժողովուրդների այդպիսի միասնության դեպքում՝ նրանց համար ահարկու չեն եղել Արևելքի ամենասարսափելի աշխարհակալները։ Կովկասյան ժողովուրդներն իրենց հերոսական պայքարով միշտ ջարդել ու Անդրկովկասից դուրս են վռնդել իրենց թշնամիներին։ Հռոմեական և այլ ագրեսորների շատ զորավարների գլուխներն Անդրկովկասում են թաղվել։

Ագրեսորների դեմ Անդրկովկասի ժողովուրդների տարած հաղթանակների շարքում փառավոր տեղերից մեկը պատկանում է Ռուքն-էդ-դինին՝ վրաց և հայ զորքերի կողմից տված ջարդին, որը տեղի է ունեցել 1202 թվի գարնանը։ Այս դեպքը մանրամասն ուսումնասիրել է ակադ. Ի. Ջավախիշվիլին իր «Վրաց ժողովրդի պատմության» մեջ, որի ռուսերեն թարգմանությունից մեծ չափով օգտվել ենք մենք։

---

[1] *Ներկա հոդվածը մի հատված է մեր «Հայ-վրացական հարաբերությունները 12-13-րդ դարերում» աշխատությունից։*

Դեպքի մասին մեզ մանրամասն տեղեկություններ է տալիս Թամար թագուհու պատմիչ Բասիլին։

Ռուսի սուլթան Ռուքն-էդ-դինը, Զարասլանի տղան, պատմում է Բասիլը, առերես Թամար թագուհուն բարեկամ ձևանալով, ծածուկ զինվում, պատրաստվում է Անդրկովկասի վրա հարձակվելու։ Բարեկամական կապերն ուժեղացնելու պատրվակով նա առերես նվերներ է ուղարկում Թամարին, իսկ ծածուկ հավաքելով իր զորքերը, պատրաստվում է կռվի։ «Նա (այսինքն՝ թշնամին — Ա.Ա.) ծածկելով իր նենգությունը,— պատմում է Բասիլը,— և ծածկվելով հավատարմության երդումներով, ձգտում է ուսումնասիրել մեր երկիրը» [1]։

Ռուքն-էդ-դինը զորք է հավաքում Միջագետքից և Կալոներոյից, Գաղատիայից, Գանդրիայից, Անկյուրիայից, Իսավրիայից, Կապադովկիայից, Մեծ Հայքից, Բյութանիայից և Պաֆլագոնիայի սահմաններից։ Ըստ Բասիլի վկայության՝ «[Նա] այս երկրներում, բացի կանանցից, ոչ ոքի չթողեց—այսպես զինեց բոլորին» [2]։

Զբավականանալով դրանով, Ռուքն-էդ-դինը գնում է Ուդջամ կոչվող ժողովրդի մոտ, որը ըստ պատմիչի վկայության «կռվում քաջ է, իսկ քանակով մորեխի և մրջյունի պես բազմաթիվ», ոսկի և հարուստ նվերներ է տալիս նրան ու կազմում նրանից հարյուր հազարանոց մի բանակ։

Բացի այս, Ռուքն-էդ-դինը հարկադրում է իր զորքերին միանալ նաև երզնկացիների, խարբերդցիների, կարնո-քալաքցիների և Սալդուխի տղայի զինված ուժերին։ Ըստ «Իստորիանի դա ազմանի շարավանդեթթանի»-ում եղած մի վկայության, Ռուքն-էդ-դինն իր զորքերի թիվը հասցնում է մինչև 400,000-ի. «... Բերձենստանի ծայրագույն սուլթանը՝ Զարասլանի որդի Ռուքնարդին կոչեցյալը, որը գերիշխում էր բոլոր այլ սուլթաններին և տիրում էր մեծ Բերձենստանին Ասիայում և Կապադովկիայում մինչև Պոնտոսի ծովը, դիմեց իր բազում զինվորականներին և ժողովեց ութսուն բյուր, որ է չորս հարյուր հազար» [3]։

Ռուքն-էդ-դինի հպարտությունն ամեն չափ ու սահմանից դուրս է գալիս։ Բասիլը նրան նմանեցնում է ողնու. «Ինչպես ասվում է գետնաբնակ ողնու մասին, որ նա շատ ձագեր ունեցող կենդանի է և երբ տեսնում է իր ձագերի բազմությունը, դուրս է գալիս ընից, խմբում մի տեղ ու ինքը բարձրանում նրանց վրա և ցցվում որպես աշտարակ, նույնն արեց նաև Նյուքարդինը» [4]։

Ռուքն-էդ-դինը, այս ամբողջ զորամասի գլուխ անցած, շարժվում է դեպի Սեբաստիա և սկսում է այնտեղ պատրաստել մարտական մեքենաները։

Կռվի համար անհրաժեշտ բոլոր տեսակի պատրաստությունները տեսնելուց հետո, նա դեսպան է ուղարկում Թամար թագուհու մոտ և հայտնում

---

[1] Басили, историк царицы Тамары (см. „Памятники эпохи „Руставели", Ленинград, 1938 г., стр. 61).

[2] Նույն տեղը, էջ 61։

[3] Պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II մաս, էջ 20։

[4] Басили, Историк царицы Тамары, стр. 62.

իր մատդրությունը։ Նամակում, որը բերում է Բասիլն իր պատմության մեջ, ի միջի այլոց, հետևյալն է ասված. «... Ես՝ Նյուքարդին, ամբողջ երկնքի տակ գտնվող երկրների սուլթան ... գալիս եմ քո դատաստանը տեսնելու ... ուղղելու քո և քո ժողովրդի վարմունքը, որպեսզի դուք երբեք չհանդգնեք վերցնել այն սուրը, որն ատծու կողմից միայն մեզ է բաշխված։ Իսկ ապրել կարող է միայն նա, ով կներկայանա իմ վրանի առաջ և կերկրպագի ինձ։ Ինձնից ներումն մի խնդրիր այն թշվառության համար, որը պատճառել ես դու...»[1]։

Պատգամավորն իր կողմից բերանացի ավելացնում է, որ Թամարի միակ փրկությունը սուլթանին հանձնվելն է, այլապես նա սուլթանի աղախինը կարող է դառնալ։ Այս ասելիս Թամարի զորավար Զաքարեն խփում է պատգամավորի երեսին և ուշաթափ անում, ասելով. «Եթե դու պատգամավոր չլիներիր, այն դեպքում հարկավոր կլիներ նախ քո լեզուն կտրել, ապա՝ գլուխը»[2]։

Ստանալով Ռուքն-էդ-դինի սպառնական նամակը, Թամար թագուհին չի շփոթվում։ Նա խսկույն իր մոտ է կանչում խորհրդականներին և արագ պատրաստություն տեսնում կռվի համար։ Նա հրամանագրեր է ուղարկում իր պետության բոլոր մասերը և հավաքում զորքը։ Մի քանի օր չանցած հավաքվում են Թամար թագուհու պահանջած զինվորները Նիկոպսիից մինչև Դերբենտ։ Թամարի զինվորները ըստ Բասիլի վկայության, «իրենց ճարպկությամբ վագրի էին նման, իսկ համարձակությամբ առյուծի»[3]։

Զորքը հավաքելուց ու պատրաստելուց հետո, Թամար թագուհին ուղարկում է Ռուքն-էդ-դինին նրա նամակի պատասխանը «... Ես զորք եմ ուղարկում ոչ թե նրա համար, որ երկրպագեն քեզ, այլ որպեսզի փշրեն քո հպարտությունը և մեծամտությունը»[4]։

Թամար թագուհին մեծահոգությամբ նախազգուշացնում է նաև Ռուքն-էդ-դինին, որ ինքն իր զորամասերն արդեն ճանապարհել է նրա դեմ և նա թող պատրաստվի դիմադրելու նրանց. «Ինձ հայտնի է քո ծառաների կազմալուծված և անհուսալի լինելը,— ասվում է նամակում,— ուստի և ես ուղարկեցի իմ ծառային, որպեսզի նա հնարավորին չափ շտապ հասցնի քո նամակի պատասխանը և ժամանակին նախազգուշացնի, որ ահա իմ զինվորները կանգնած են քո դարպասի առջև»[5]։

Թամար թագուհու զորքը Իվանե և Զաքարե ու եղբայրներ Շալվա և Իվանէ ախալցխացիների ղեկավարությամբ շարժվում է թշնամու վրա։ Նրանք թշնամուն հանդիպում են Բասենում։ Ըստ նախօրոք մշակված պլանի, Թամարի զորամասերը պիտի հարձակվեին հանկարծակի։

Նրանք թշնամուն գտնում են միանգամայն անհոգ բանակ դրած։ Ռուքն-էդ-դինն այնքան է տարված լինում ինքնահավանությամբ, որ անգամ պահակներ չի նշանակում։

Կռիվը սկսվում է առաջապահ զորամասերից, որոնց ղեկավարներն էին Զաքարե Ամիրսպասալարը, Շալվա ու Իվանե ախալցխացիները և Թորելին։

---

1 Նույն տեղը, էջ 62—63։

2 Հմմ. ակադ. Զավախիշվիլու «Վրաց ժողովրդի պատմությունը» աշխատության հետ։

3 Басили, историк царицы Тамары, էջ 63։

4 Նույն տեղը, էջ 64։

5 Նույնը։

Թամարի հիմնական զորամասը բաժանվում է երկու մասի։ Սկսվում է կատաղի ճակատամարտ։ Երկու կողմից էլ ընկնում են բավական թվով կըռվողներ։ Լինում են այնպիսի մոմենտներ, երբ թշնամին որոշ հաջողություն է ունենում, բայց վերջում Դավիթ Թագավորի (Դավիթ Սոսլան) և Զաքարեի զորամասերը ջարդում են թշնամու դիմադրությունը և փախուստի մատնում նրան։

Թամարի քաջ զինվորները,—պատմում է Բասիլը,—հետապնդում են փախչող թշնամուն և ոմանց սպանում են, իսկ ոմանց «հավի ճտերի նման գերի հավաքում»։

Թշնամու զորքը գլխովին ջարդելուց և փախուստի մատնելուց հետո, Թամարի զինվորներն սկսում են հավաքել նրանց թողած հարուստ ավարը։ Այդ ավարն այնքան շատ էր, պատմում է Բասիլին, որ «...հնարավոր չէր ոչ աչքով չափել և ոչ էլ հաշվել նրանց ոսկե և արծաթե ամաններն ու գործվածքները։ Կային խմելու համար ոսկե ամաններ՝ զարդարված քարերով, կային մեծ և փոքր ափսեներ, կժեր, կաթսաներ հարուստ ու անգնահատելի այլ տեսակի ավարով լի. իսկ ով կարող էր հաշվել ձիերի, ջորիների և ուղտերի թիվը, վրանների ու գորգերի քանակը, որոնք թողել էին նրանք»[1]։

13-րդ դարի վրաց մի պատմիչի վկայությամբ, Ռուքն-էդ-դինից վերցրած գերիների թվում է գտնվում նաև Երզնկայի ամիրան. «... Ապա (Թբիլիսի) բերին Ռուքնադինի դրոշակը և նախ մտցրին Երզնկայեցուն և ապա այլ երևելիների ... Եւ Երզնկայեցուն [Թամարը] պահեց Թբիլիսիում իբրև բանտարկյալի»[2]։ Նույնը վկայում է նաև Լաշա Գեորգու ժամանակակից պատմիչը՝ ավելացնելով գերիների թվում նաև երկու այլ ամիրաների. «Եկավ Ռուքնադինը, որը հետն ուներ Դիմուշկից և Ալաբից այսկույս (ժողված) զորք՝ այս [Թամարի] թագավորությունը կործանելու համար։ [Մխարգրձելները] դուրս ելան նրանց հանդեպ Բասյան երկրում, փախուստի ենթարկեցին, կոտորեցին և ընաջինջ արին նրանց, վայր գցեցին սուլթաններին և գերեցին Երզնկայի, Շամի և Բյուրիայան ամիրաներին»[3]։

Ռուքն-էդ-դինին ջարդելուց հետո Թբիլիսիում կազմակերպվում է փառավոր շքահանդես։ Հաղթող զորքերը մեծ հանդիսավորությամբ բերում, Թամար թագուհու ոտքերի առաջ են դնում Ռուքն-էդ-դինի դրոշակը։

Ռուքն-էդ-դինի դեմ տարած հաղթանակով, ամփոփում է Բասիլն այդ կռվի ամբողջ պատմությունը, «Թամարն այնպիսի մի փառք ու պատիվ ստեղծեց իր տան համար, որ այդպիսի փառք ու պատիվ ոչ ոք երբեք չի ստեղծել աշխարհի սկզբից սկսած»[4]։

Ռուքն-էդ-դինի դեմ Անդրկովկասի ժողովուրդների տարած այս փառավոր հաղթանակի մասին, ճիշտ է՝ շատ կարճ, բայց որոշակի, տեղեկություն է պահպանված պարսկական աղբյուրներում։ Այսպես, Համդուլլահ Ղազ-

---

1 Басили, историк царицы Тамары, стр. 66.

2 Գրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II մաս, էջ 35։

3 Նույն տեղը, էջ 43։

4 Басили, историк царицы Тамары. стр, 67.

վինին պատմում է, որ Ռուքն-էդ-դինը «գնաց աբխազների և վրացիների վրա, սակայն համապատասխան զգուշություն չցուցաբերեց և պարտվեց»[1]։

Կիրակոս Գանձակեցու հաղորդած մի փոքրիկ տեղեկությունից երևում է, որ Թամարի զորքերը ոչ միայն ջարդել են Ռուքն-էդ-դինին, այլև հարկատու են դարձրել Կարինի սուլթանին. «Յաւուրս ժամանակաց Թագաւորութեանն Լեւոնի Հայոց արքայի էին յԱրևելս երկու եղբարք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ... Զաքարիայ... անուն առաջնոյն Զաքարէ և երկրորդին Իւանէ, արք քաջք և ճոխք իշխանութեամբ, պատուելք ի Թագուհւոյն Վրաց, որ Թամարն կոչէր, դուստր Գէորգեայ քաջի, որդւոյ Դեմետրէի։ Եւ Զաքարէ էր զօրավար Վրաց և Հայոց՝ որ ընդ ձեռամբ Թագաւորին Վրաց ... հարկատուք արարին և զսուլտանն Կարնոյ քաղաքին»[2]։

Ռուքն-էդ-դինի դեմ տարած հաղթանակի մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս մեզ դեպքերին ժամանակակից մի հայ հիշատակագիր, իր ընդօրինակած տոնական ճառընտրի վերջում թողած մի հիշատակարանում։ Հիշատակագիր պարունակող այդ գրչագիրն այժմ գտնվում է ՀՍՍՌ Կերպարվեստի թանգարանում և հայտնի է «Մշո Առաքելոց վանքի տոնական ճառընտիր» անունով։ Այս հիշատակարանի պարունակած պատմական արժեքավոր նյութերը, որքան մեզ հայտնի է, դժբախտաբար չի օգտագործված այդ շրջանին վերաբերող պատմագիտական ուսումնասիրությունների մեջ, եթե չհաշվենք փոքրիկ մի հատված, որը հրատարակվել է «Խաղբակյանք կամ Պռոշյանք» աշխատության մեջ։

Այդ հիշատակարանում Ռուքն-էդ-դինի ջարդի վերաբերյալ ասված է. «Եւ կատարեալ գրոց սուլթանն Սեաստայ ժողով արարեալ անհուն բազմութեամբ, նմանեալ անբարիշտին Յուլեանիայ, փքացեալ, լեռնացեալ եհաս ի Թէոդոպոլիս, եւ անտի կամեցեալ անցանել յաշխարհս Հայոց եւ Վրաց. եւ ամենևին մոռացաւ աստուած, եւ յուսացաւ ի նանրութիւն իւր, կամէր յաւարի առնուլ զաշխարհս ամենայն։ Իսկ աւգնականութեամբն աստուածոյ եկին հասին զաւրքն Վրաց, և մեծն Զաքարէ՝ հանդերձ Իւանէիւ հարազատաւն իւր և այլ աստուածասէր իշխանաւք եւ նախարարաւք. եւ յոգնախումբ խառնիճաղանջ բազմութեամբ հասին ի վերայ անաւրէն զաւրացն Տաճկաց, եւ ոմանք ի փախուստ դարձան, բայց սուլթանն անվրէպ մնաց, սակայն զաւարոյն թիւ ո՞վ կարէ գիտել՝ զոսկւոյ և զարծաթոյ, զմետաքսի, զերամակս ուղտոց, ձիոց և ջորւոց»։

Ինչպես տեսնում ենք, դեպքին ժամանակակից հիշատակագրի տեղեկությունները լիովին հաստատում են վրաց Բասիլի և պարսից Ղազվինու տեղեկությունները՝ Թամար թագուհու զորքի՝ Ռուքն-էդ-դինի դեմ տարած փառավոր հաղթանակի մասին։

Մուշի Առաքելոց վանքի ճառընտրի այս հիշատակարանը մեծ արժեք է ներկայացնում, սակայն, մի այլ տեսակետից—նա օգնում է մեզ ճշտելու դեպքի ժամանակը։ Կոլկասագիտության մեջ, սովորաբար, Ռուքն-էդ-դինի

---

1 Հմմ. Ի. Զավախիշվիլու „История грузинского народа“ աշխատ., վրացերենից թարգմանված ռուսերեն (ձեռագրի իրավունքով)։

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Ղուկասյան հրատ., էջ 154։

այդ ջարդը դրվում է 1205—1206 թվերին։ Ըստ վրաց պատմիչի և իբն Ալսիրի վկայության, Ռուքն-էդ-դինի ջարդը տեղի է ունեցել Ղարսը վերցնելուց հետո, հետևաբար, ենթադրում ենք, որ այդ դեպքը պիտի եղած լինի 1205—1206 թ. թ.[1]։

«Խաղբակյանք կամ Պռոշյանք...»-ի հեղինակը հիմնվելով վերը հիշված ճառընտիր հիշատակարանի վրա, Ռուքն-էդ-դինի դեմ Թամար թագուհու զորքի տարած հաղթանակը նշանակում է 1204—205 թ. թ.։

Այս հարցով զբաղվող մասնագետները ծանոթ չեն Մշո Առաքելոց վանքի ճառընտրի հիշատակարանին, իսկ վերը հիշված հեղինակը դեպքի ժամանակը որոշելիս ուշադիր չի նայել հիշատակարանը։

Հիշատակարանից երևում է, որ ճառընտիրը գրված է Վարդան Կարնեցու կողմից՝ Աստվածատուր Բարերդցու պատվերով, երեք տարվա ընթացքում («զկնի երից ամաց եհաս յաւարտ բանիս»)։ Ճառընտիրն ավարտելուց հետո, ձեռագրի հիշատակարանը դեռ չգրած տեղի է ունենում Թամարի և Ռուքն-էդ-դինի զորքերի կռիվը։ Դրանից հետո պատվիրատու Աստվածատուրը ինչ որ մեղադրանքով ձերբակալվում է քաղաքի դատավորի որոշմամբ։ Դատավորն Աստվածատուրի տնից մի շարք տնային իրերի հետ միասին բռնագրավում է նաև ձեռագիր ճառընտիրը, դատավորը շուտով գնում, բնակվում է Խլաթում՝ իր հետ տանելով նաև ճառընտիրը։ Ձեռագիրն այստեղ երկու տարի մնում է պահեստում («Եւ Բ ամ կայր ի պահեստի»)։ Հայ հոգևորականներից ոմանք լսելով, որ ճառընտիրը գտնվում է դատավորի մոտ, սկսում են բանակցություն վարել այն գնելու համար։ Այդ բանակցությունը տևում է մի քանի ամիս, մինչև որ Եսայի եպիսկոպոսի նախաձեռնությամբ գնվում է ճառընտիրը և բերվում Ղաղարի վանքը։ Այստեղ էլ հենց գրվում է գլխավոր հիշատակարանը։ Հիշատակարանը գրվել է 1204 թ. «Եւ ի ծննդենէ բանին աստուծոյ լինի ամք հազար երկերիւր և չորս»։ Ուրեմն, ըստ այս հիշատակարանի, Ռուքն-էդ-դինի կռիվը տեղի պիտի ունեցած լինի 1202 թվի գարնանը, այսինքն՝ հիշատակարանը գրվելուց մոտ երկու և կես տարի առաջ։

Մուշի Առաքելոց վանքի ճառընտիրն օգնում է մեզ ճշտելու նաև Թամար թագուհու և Ռուքն-էդ-դինի զորքերի միջև տեղի ունեցած ընդհարման վայրը։ Կովկասագետներից ոմանք հիմնվելով վրաց պատմիչի այն տեղեկության վրա, որ «(Մխարգրձելները) դուրս ելան (թշնամիների) դեմ Բասյան երկրում և փախուստի մատնեցին, կոտորեցին և ընկջինջ արին նրանց»[2], ենթադրել են, որ ընդհարման վայրը եղել է Բասենը։ Ճառընտրի հիշատակարանից երևում է, որ ընդհարումը տեղի է ունեցել ոչ թե Բասենում, այլ Թեոդոպոլսում (Կարինում)։ Սուլթանը, ասված է հիշատակարանում, «եհաս ի Թէոդոպոլիս եւ անտի կամեցաւ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց... օգնականութեամբ աստուծոյ եկին հասին զաւրքն Վրաց և յանխնայ կոտորեցին»[3]։

Ընդհարման տեղը Թեոդոպոլսում է նշանակում նաև Համադուլլահ Ղազ-

---

1 Տես И. А. Джавахашвили, История грузинского народа (русский перевод).

2 Մուշի Առաքելոց վանքի տոնական ճառընտիր, թերթ 602 բ.։

3 Նույն տեղ, թերթ 602 բ.։

վինին։ Ռուքն-էդ-դինը, ասում է նա, «գնաց աբխազների և վրացիների վրա և... պարտվեց Ռումում»[1]։ Հավանական է, որ վրաց պատմիչը ընդհարման վայրի նկատմամբ ոչ թե սխալվում է, այլ նա ցանկանում է ցույց տալ թշնամու հետ շփվելու առաջին վայրը։ Հավանական է, որ կողմերն իրար հանդիպել են Բասենում, իսկ վճռական մարտը տեղի է ունեցել Թեոդոսիոսում։

Ռուքն-էդ-դինի դեմ Անդրկովկասի ժողովուրդների տարած հաղթանակը նշանակալից ու կարևոր դեպք է Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ։ Այդ հաղթանակը վերջ դրեց Անդրկովկասը նվաճելու նկատմամբ թաթարական խանների սին հույսերին։ Այս հաղթանակը մի անգամ ևս ցույց տվեց, որ Անդրկովկասի ազատասեր ժողովուրդները ոչ միայն կարող են պաշտպանվել արտաքին թշնամուց, այլև կտան հարկավոր հակահարվածը, եթե նա փորձի ոտք դնել մեր երկրի սահմանները։

Ստալինյան անխզելի դաշինքով կապված անդրկովկասյան ժողովուրդները հպարտությամբ են հիշում իրենց նախնիքների մղած ազատագրական պայքարի հերոսական էջերը և ավելի մեծ վճռականությամբ ու դայրույթով են լցված դեպի ֆաշիստ ագրեսորները։

[1] Հմմ. Ի. Ջավախիշվիլու վերև հիշված աշխատության հետ։